№ 224 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 224

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK“.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՐՈՒԲԼԻ.

Հոկտեմբ. 1-ից մինչև նոյեմբ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. հուպարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, Դ. Սytова, և նրա բաժանմունքներում—Գիտերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 8, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ „ԱՐՕՐ“

ԱՄՍԱԳՐԻ № 7—8-Ը (յուլիս-օգոստոս) հետեւեալ բովանդակութեամբ.

1) «ՆՇԱՆ ԽՆԴՐԷ» (բանաստ.) . . . . Դոկտ. Ց. Թիրեաքեանի
2) ՍԱՒՈՒՌՈՂ ՈՅԻՆ, վէպ . . . . Ց. Սօլովեանի
3) ՏԻԿԻՆ N. N.-Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, Ա. Չէխովի . . Թարգմ. Շ-ի
4) ՁԱՐ ՄԱՐԴՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, Օսիպ Դիմովի . . » Մ. Բէջանեանի
5) ՄԵԾ ՍԻՐՏԸ. Վաս. Նէմիրովիչ-Դանչէնկոյի . . » Սամ. Դաւթեանցի
6) ՎԵՐՋԱԼՈՑՍԸ (բանաստ.) . . . . Էմ. Օսի
7) ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, պիէս . . . . Գ. Բաշինջաղեանի
8) ՆՈՒՇԻԿ (բանաստ.) . . . . Գէորգ Դօղոխեանի
9) ԳԷՈՐԳ ԴՕԴՕԽԵԱՆ, կենսագր. նօտեր . . . Ց. Ապէնդիարի
10) ԱԶԳԱՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
11) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ, Արթ. Մելիքի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի
12) ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՒ ՆՐԱ ԴԷՄ ՀՆԱ-ՐԱՒՈՐ ՄԱՔԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ . . . . բժ. Բ. Աղասարեանի

2—2

ԱԶԳ

Հինգշաբթի, հոկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 7-ին, Մանթաշեան Առեւտրական Դպրոցի շինութեան մէջ, Բօրային կոմիտէի դահլիճում (Բէհբուտովսկայա փողոց) ՆՇԱՆԱԿՎԱԾ է մեծ խորհրդակցական ժողով՝ ուր պէտք է քննվի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆԴԷՍԻՆ Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից մասնակցելու ձեւի եւ Յօբելեանական Յանձնաժողով կազմելու խնդիրը:

Հրաւէրները անուանական են: Յանկացողները կարող են մուտքի տոմսակ ստանալ «Մշակի» խմբագրութեան մէջ, դիմելով Հ. Առաքելեանին:

(առ.) 2—2

Տարեի 1500 և տպագիւտ գրքեան 400-ամեակների առիթով Կովկասի Հայոց Բարեգործակ. Ընկերութեան Խորհուրդը

„Աւ. Պօղոսեան“ ֆօնդով հրատարակած „Սուրբ Մեսրոպ“ գիրքը՝ հեղ. Լէօ Ի, էջ 336, գինը 75 կ., վաճառում է 50 կ., ճանապարհածախսով 65 կ.։ Դպրոցներին, հիմնարկութիւններին և 30-ից աւել գնողներին 40 կոպ.։

Գումարով գնողների ճանապարհածախսը Խորհրդի վրա։ Արժէքը կարելի է ուղարկել նաև պօստային մարկաներով։ Դիմել՝ Тифлисъ, Абасъ-Абадская пл. д. № 7.

(շ.) առ. 758. 2—1

„ՆԱԽՇԻՐԱ“ ԸՆԿԵՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի տեղեկութիւն ՎԱՌԵԼԱՑԻՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՏԷՐԵՐԻՆ և ՔԱՐԱՇՈՒՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ, Թիֆլիսում, որ Տկվիբուլի քարածուխի մենավաճառային պայմանագրի ժամանակը Ընկերութեան կօնտրագէնտի հետ վերջացած լինելու պատճառով, վագօններով տրվող պատուէրները ցանկացողներից կանխապէս ընդունվում են Ընկերութեան վարչութեան մէջ, Սօլոլակայա № 14 տանը։

(չ. կ.) առ. 750. 3—2

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

նշանակված է հոկտեմբերի 10-ին, երեկոյեան ժամը 7½-ին, քաղաքային դումայի դահլիճում՝ ընտրելու Վարչութեան 8 անդամ, որոնցից մէկը գանձապահ, 3 փոխանդամ, վերատուգիչ յանձնաժողովի 3 անդամ և 2 փոխանդամ։ Անդամներին ուղարկվում է և առանձին հրաւէր։

Նոր անդամ լինել ցանկացողները կարող են գրվել մինչև ընդհանուր ժողովի բացումը, որոնք և ըստ կանոնադրութեան կը քուէարկվեն նոյն ժողովում։

(առ.) 756. 1—1

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Հոկտեմբերի 13-ին լոյս կը տեսնի «ՏԱՐԱԶԻ» հրատապ № 10 նուիրված ՀԱՅ ՏԱՌԻ 1500-ամեայ և ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ամեայ ՅՕԲԵԼԵԱՆԻՆ։ Գինը մինչեւ հոկտեմբերի 10-ը բաժանորդագրվողների համար (մէկ) 1 բուբլի, լոյս տեսնելուց յետոյ 3 բուբլի։

Դիմել՝ ТИФЛИСЪ, Редакція „ТАРАЗЪ“.

Պատմական դասագիրքեր, ընդարձակարարներ, դասագրքեր, գրիչներ, գրչատուփեր, գրչակալներ, գրչի ծայրեր, գրչի ներներ, գրչի ներներ, գրչի ներներ

Իշխանութիւնների կարգադրութեամբ ամբողջ բոլգարական ծովափին փոքրոսները հանգցված են։

—

Ռակիւբ.—Սերբիական զինուորական ոյժերը դիմում են Պալանկայի վրա։

Թիւրք զինուորները սանձարձակութիւններ են գործում։

Կումանովոյում իշխանութիւնները կալանաւորել են բոլգար և սերբ քահաներին, ուսուցիչներին և ականաւոր քաղաքացիներին։

ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՍԼԱՒՈՆՆԵՐԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 հոկտեմբերի

Վիէննա.—Հոկտ. 8-ին Պոդգորիցա մեկնեց սանիտարական մի խումբ բաղկացած 2 բժշկից և 7 գթութեան քոյրերից։

—

Կիէվ.—Սլաւոնական բարեգործական ընկերութիւնը հանգանակութիւն սկսեց յօգուտ հարաւային սլաւոնների։

Սէվաստոպոլ.—Սլաւոնները, յոյները և թիւրքերը մեծ խմբերով մեկնում են հայրենիք մասնակցելու պատերազմին։

—

Սերաէվո.—Հանգանակվեց 25,000 կռօն յօգուտ սերբիական Կարմիր Խաչի։

—

Պրագա. — Զեխական լրագիրները կոչեր են տպում հանգանակութեան մասին յօգուտ սերբիական, բոլգարական և չերնոգորական Կարմիր Խաչի։

—

Մոսկվա.—Զեմստվային ծառայողները վճռեցին իրանց ռոճիկների 1 տոկոսը յատկացնել յօգուտ կուող սլաւոնների։

—

Պետերբուրգ.—Կարմիր Խաչը պատերազմի դաշտն է ուղարկում հոկտեմբերի 10-ին մի քանի սանիտարական խմբեր։

ՎԼՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

Կ. Պոլիս, 29 սեպտեմբեր

Երէկ ազգային ժողովին մէջ լրացաւ քաղ. ժողովի ընտրութիւնը, որուն անցեալ շաբաթ սկսուած էր։ Պառակտուած կեդրոնը կրեց առաջին անգամ ըլլալով պարտութիւն մը։

Վարչութեան ընտրութեան համար հաստատեալ 4—5 խմբակցութիւններու միացեալ ուժը յաղթեց կեդրոնին այլասերած և ինքնահաւան մեկուսացման, և միացեալ կուսակցութեանց ընտրելիներուն ցուցակը յաջողեցաւ։

Այս կերպով կազմուած վարչութիւնը խառն տարրերով կազմուած կըլլայ։ Ասոնց մէջ կան նաև կեդրոնին ընտրելիները, բաւական մեծ թուով։ Հետևաբար կեդրոնը որոշ կերպով ընդդիմադիրի դեր չպիտի կրնայ ստանձնել։

Այս պարտութիւնը իր բարոյական կողմն ունի սակայն և այս տեսակէտով անիկա ամենէն աւելի շահեկան կը հանդիսանայ։

Կեդրոնին մեծամասնութեան աչքապտուութիւնը առաջ կը վերջանայ, և, ինչպէս կը տեսնուի, անկէ դուրս մնացողներ եթէ համերաշխին, կրնան անոր դէմ պայքարիլ, մանաւանդ որ վերջին անգամ տրուած ուրոշումով 71-ի մեծամասնութիւնը պարտաւորիչ ըլլալէ դադրած է։

Ընդհակառակը երբեմն իրապէս կեդրոնը գրեթէ կը ներկայացնէր 70-ի չափ անդամներու համախմբութիւն մը, որ մասնաւորապէս կեդրոնին վարիչներու այլասերժ և կամակոր վերաբերումին հետևանօք հետզհետէ նուազեցաւ և իջաւ մինչև 30-ի։

Երէկի ընտրութեան մէջ կեդրոնը ունէր հաւուռ 26 քուէ, ինչ որ այս խմբակցութեան կազմալուծումը կը նշանակէ։

Միւս կողմէն պէտք է նկատել, թէ կեդրոնէն դուրս մնացած միւս կուսակցութիւններն ալ այսօր կազմալուծուած են։

Շատ հաւանական է, որ նոր պայքարի մը պարագային նոր խմբաւորումներ, նոր կուսակցութիւններ կազմուին։

Ազատականաց պէտք՝ Ստեփան Գարայեան վերջերս կեդրոնի անդամներուն յայտարարած է՝ թէ ինքն երկար ուսումնասիրութիւններէ յետոյ եկած յանգած է այն եզրակացութեան, թէ ազատականաց և կեդրոնի ծրագիրներու մէջ սկզբունքի տարբերութիւններ գրեթէ չկան, և պարզ թիւրիմացութիւն մըն է, որ այս երկու կուսակցութիւնները փոխանակ քով քովի բերելու՝ իրարու դէմ կը հանէ։

Գարայեան անկեղծութիւնը ունեցած է յայտարարելու, թէ իրենք ժամանակին դաշնակցականներուն հետ ըլլալ կազմելով՝ ուզեցին անոնց ծայրայեղ տրամադրութիւնները չափաւորել, սակայն անոնք պահ մը այս ծրագրով շարժելու յանձնառու ըլլալէ յետոյ՝ օր մըն ալ եկած յայտարարած են, թէ իրենց համար այդ շրջագիծը շատ նեղ կը գտնեն և իրենք իրենց արմատական ծրագիրներուն պիտի յարին։

Այս կերպով շատ որոշ կերևայ, թէ ազատական-կեդրոն *ընկի* հաւանականութիւնը կայ, ինչ որ անկարելի ալ չէ։ Ազատական պիտակ անուան տակ կազմուած խմբակցութիւնը ունէր իր մէջ շատ բանէտ և օգտակար անձնաւորութիւններ, որոնք կըրնային օգտակար ըլլալ։

Ասոնք «ազատական» անունին հմայքով հրապուրուած, ոմանք խնամիական, ազգականական կապերով, ոմանք առևտրականդրամական հաշիւներով գացած միացած էին այդ խմբակցութեան, առանց սկզբունքներով և համոզումներով կեդրոնի պատկանողներէն դոյզն տարբերութիւն մը ունենալու։

Հիմա, այս տարտամ վիճակին մէջ, կեդրոնի կրած պարտութիւնը առիթ մը կը հանդիսանայ կուսակցական վերակազմութեան։

* *

Երէկ ազգ. ժողովը մերժեց Արշարունի պատրիարքի հրաժարականը, որուն նկատմամբ արդէն ուրիշ բան մը ըսելու միջոց չունէր ազգային ժողովը՝ ներկայ պարագաներու բերմամբ։

Արդէն պատճառներն երկարօրէն բացատրած ըլլալով, մեզի համար անակնկալ մը չէր ազգ. ժողովին այս եզրակացութեան գալը։

Արդէն պատրիարքը գործնականապէս լուծած էր իր հրաժարականին հարցը, վիճակին ստիպողութեան առջև Բ. Դուռ դիմումներ կատարելով։ Շատայլ

Ե. Գ.—Քաղաքական ժողովի կազմը հետեւեալն է. Ոսկան էֆ. Մարտիկեան, Լևոն էֆ. Տեմիրճիպաշեան, Սարգիս էֆ. Սուէն, Յարութիւն էֆ. Զեքի, Ստեփան էֆ. Գաբրիէլեան, Համբարձում էֆ. Պոյաճեան, Աբրահամ էֆ. Տէր-Յակոբեան, Տիրան էֆ. Երկանեան, Սմբատ էֆ. Քեռթիպեան, Վահան էֆ. Փափազեան, դօքտ. Ճելալ էֆ., Արիստակէս էֆ. Դասպարեան, դօքտ. Թերզեան էֆ.։

Ցիշեալ անձերէն առաջին վեց հոգին ընտրուեցան սեպտ. 15-ի ազգ. ժողովին մէջ, իսկ մնացեալ մասը՝ ընտրուեցաւ սեպտ. 28-ի ազգ. ժողովէն։ Նոյն

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱՌՐԻԿՆԵՐ

—

Մերսին, 1 սեպտ.

Անատուզութիւնը, աւերը, թալանը և սպանութիւնքը մեր կողմերն ալ գլուխ վերցուցած՝ հանդարտ ժողովրդեան հանգիստը վրդոված են։ Երբ լրագիրներ կարդալով ի լուր Հայաստանի դժբաղդ կացութեան սիրտերնիս կը մորմոքի, ասդին մեր շուրջն ալ այնպիսի բաներ մը կը դառնան, որ անկարելի է չխորհիլ, թէ Անատոլուի արևելեան և հարաւ-արևմտեան հայաբնակ այդ վայրերու այս օրերուն անցուցած դժնդակ և արիւնոտ դէպքերը միևնոյն տեղծ և հայակուլ գործունէութեան զուգորդուած օղակները չըլլան։

Անօրինակ տագնապ մը կանցնինք։

Հաշէն, Զէյթուն և այլուր դէպքերը գահավէժ ծանրանալու վրայ են։ Կառավարութիւնը պատրուակ ըրած քանի մը զինուորցուներու փախիլը և քանի մըն ալ սրիկայ գողերու փախելով անոնց յարիլը՝ անօրինակ եռանդով մը իսլամ միտքերը գրգռելու մէջ է՝ ինքն անձամբ զգուշանալով, առ այժմ, ուղղակի անոնց հետամտելէ։

Երբէք պիտի չպաշտպանենք մերայիններէ այդ դասալիքներուն և անոնց յարած օրէնքէն փախչող յանցաւորներուն արարքը, որ թիւրքերէ աւելի նոյն իսկ հայերուն համար մէկ մէկ ճշմարիտ աղէտներ դարձած են։ Ատոնք մեր արգահատանքներէն իսպառ դուրս կը մնան։

Կիլիկիոյ վեհ. կաթողիկոսը անցեալները երբ այցելութեամբ Հաշէն և Զէյթուն գնաց, ինքն իսկ չվարանեցաւ անոնց ազգավնաս ընթացքը նշաւակել, որոնք նոր նոր աղէտներու աղբիւր կը դառնային ուժասպառ ժողովրդեան գլուխին։ Հրապարակաւ ու քարոզի մէջ անիծեց ժողովրդեան այն մասը, որ այդ աւազակները կը պահէ, կը քաջալերէ ի վնաս երկրին և հայ ազգաբնակութեան։

Կաթողիկոսը բացարձակապէս իրաւունք ունէր։ Բայց եթէ ամեն տեղ չարագործ մը իբր չարագործ կը հալածուի—թողունք թէ թիւրք իշխանութիւնները ցարդ իսկ չարագործները պաշտպանած, ազատ թողած, նշաններով զարդարած և ներումի արժանացուցած են միշտ, փոխանակ պատիժներու—սակայն երբ կը պատահի տեղ մը, որ չարագործը հայ է, այդ չարագործին բովանդակ մեղքը թէ կառավարութիւնը և թէ իսլամ հասարակութիւնը չեն վարանիր վերագրելու համայն հայութեան, և չարագործին հատուցանել չկրցած պատիժը անոնք տասնապատիկ քաշել կուտան անմեղ աշխատաւոր հայերուն։

Ի՞նչ, մեր երանելի երկրին մէջ մթթէ բնաւ չարագործ ուրիշ մարդեր չեն յառաջ եկած, որոնք թալած, սպանած և անապահովութիւն սփռած են, որպէսզի անոնց չեղած հետապնդութիւնքը միայն՝ հայազգի այդ մէկ քանի սրիկաներու պատճառաւ՝ պարտաւորուած են տուժել անմեղները։

Զմեռս երբ հաշէնցի սրիկայ հայ մը իր սրիկայ մէկ թիւրք ոստիկանին հետ բարեկենդանի գիշեր մը ի բուն արբելէն վերջ սպաննեց զայն, կառավարութիւնը այնքան յառաջ գնաց, որ սպառնաց Հաշէնն ամբողջ քարուքանդ ընել և զինուորական ատեան հատատել հոն։ Որպէս թէ ալ այդ երկրին մէջ մարդասպանութիւն ըսուած բանը գործուած չըլլար, թողունք մէկ-մէկ, նոյնիսկ հարիւրներով և հազարներով։ Բայց ներկայ պարագային մէջ խնդիրը թիւրքի մը սպանութեան վրայ էր... հայու արիւնը ինչ կարժէր։

Ու հաշէնցին իր ձեռքով բռնեց և մարդասպանը կառավարութեան յանձնեց։ Թող մարդասպանն իր մեղքը քաշէ, ոչ ոք և մենք հայերս բնաւ պիտի չուզէինք մարդասպան—թէկուզ հա ըլլայ ան—պաշտպանել։

Բայց այդ դէպքին արձագանգ ըլլալով անկէ քանի մը օր վերջ Սիսի մօտերը հայ մը սպաննեցին, ու կառավարութիւնը ոչ պատերազմական ատեանի պէտք տեսաւ և ոչ իսկ սպառնալիքներու։ Կասկածով մէկ երկու մարդիկ ալ բռնեց, որոնք առ ի չգոյէ ապացոյցի պիտի ազատուին. առոր ինչ տարակոյս։

Ատով ալ չբաւականացած՝ միշտ այդ մէկ պատճառով՝ օրերս Հաշէնի քովը սպաննեցին այր մը և կին մը, երբ եղկելիները անգիտակ իրենց ճակատագիրէն՝ հանդիսատ Հաշէն կուգային գիւղէ մը։

Ու ամբողջ քաղաք մը ահաբեկ՝ չը գիտեր, թէ ինչ ընէ։ Իրաւ է թէ կառավարութիւնը բաներ մը կընէ, մարդասպանները բռնելու համար, և կը լսուի թէ ոստիկաններ ևս ղրկուած են անոնց ի խնդիր, բայց հետևանք մը չէ եղած, ինչպէս միշտ, և աւազակները կրցած են փախչիլ մէկ կուսակցութենէն միւսը (կարծես օտար հող մը ըլլար), և խնդիրը վերջացած է կառավարութեան համար. մինչ անդին ժողովուրդը սարսափէն տանջուած՝ ոտքը քաղաքէն դուրս չի կրնար հանել և դատապարտուած է անօթութենէ ու անսուաղութենէ մեռնիլ։

Ուրիշ տարաձայնութիւններ ալ կը լսուին օրերս Հաշէնի մասին, որոնց ստուգութիւնը կարելի չէ հաստատել։ Կըսեն թէ քանի մը հովիներ զօրանոցին վերևը հօտերնին արածեցուցած ատենին մէկ քանի քար կը գլորի վար, որուն վրայ զօրքերը զայրանալով կը սկսին կատաղի կրակ մը անոնց վրայ...։

Զէյթունի կացութիւնը աւելի շփոթ է։ Հայ աւազակները քանի մը շաբաթ առաջ չէրքեզ մը կը կողոպտեն։ Ատիկա բաւական կըլլայ որ ամենուստ չէրքէզները սկսին Զէյթուն գացող կամ Զէյթունէ մեկնող ուղեորները թէ թալել և թէ դարնել։

Կառավարութիւնը, որ ասոնք կը տեսնէ, ձեռնպահ կը մնայ։ Ան այս պարագային մէջ պէտք մը չի տեսներ «իր բարեացակամ չէզոքութենէն» շեղելու, ուստի և ապարդիւն մնացած է զօրաւորաց, որուն պատճառով ալ ստեղծուած է կացութիւն մը, որ կրնայ ծանր անակնկալներու ծնունդ տալ։

Ինչ որ կրնանք ըսել, այն է, թէ դրութիւնը վերջին ծայր սրուած է, և վերջին քանի մը տարիներու մէջ Ուլնիոյ կողմերը կացութիւնը երբէք այսքան շփոթ և գէշ չէր եղած։

Կոկիսոնի հայութիւնը տագնապի օրեր կանցնէ։ Շրջապատուած բազմաթիւ թիւրքերէ և չերքէզներէ՝ այդ ափ մը աղքատիկ հայ գիւղացիները ամեն օր մահուան արհաւիրքը կանցնեն։ Չերքէզները, որ առաջ բաւական բարեացակամ էին հայերու վերաբերմամբ, այժմ անոնք ալ թշնամի՝ առիթը չեն փախցներ հայերը նեղելէ։

Թաշ-Օլուկի հայերը, որոնք խառն կը բնակին թիւրքերու հետ, օրերս շատ գէշ վիճակ մը ունին։ Թիւրքերը տարաձայնութիւն կը հանեն, թէ բամազանէն հոք զիրենք պիտի ջարդեն։ Եւ բամազանին ալ չսպասելով, արդէն կը սկսին հայերուն բերքերը և հունձքերը խլել և տանիլ բռնի։ Ատով ալ չբաւականացած՝ կը սկսին աչքը հայուհիներուն տնկել և գեղանի աղջիկները առանգել բռնի և բոլորովին համաձակ եղանակաւ մը։

Խնդիրը պահ մը ծանր երևոյթ մը կառնէ, և այն ատենն, որ ամբողջ գիւղը կը սոսկալի ունեցած-չունեցածի էշերուն վրայ բեռցնել և Ուլնիա անցնիլ։

Կոկիսոնի կառավարութիւնը, որ մինչ այն ատեն կը շարունակէր պահել իր «բարեացակամ չէզոքութիւնը», տեսնելով որ գործը ուրիշ երևոյթ կառնէ և կրնայ ծանր պատահարներու յանգիլ, ոստիկան կը ղրկէ և մեծամեծները կը համոզէ, որ վտահեցնեն գիւղացիները և տեղերնին դառնան։ Գիւղէն 2—3 ժամ հեռաւորութենէ ետ կը դարձուին վերջապէս։

Վերջերս քանի մը հայեր ևս սպաննուեցան Ամանասի կամ Գեավուր-Դաղի մօտակայքը։

Քանի մը հայերը վերջերս ի խնդիր առևանգուած հայ աղջկայ մը՝ անխոհեմութիւն կունենան համբու վրայ իսլամ կին մը կողոպտելու։ Ասոր վրայ բազմաթիւ գիւղացիներէ պաշարուած լեռներու մէջ կռիւ մը եղաւ, կունենան, լսածովս, երեք մահ և մէկ վիրաւոր։ Իսլամներէն ալ մէկը, կըսուի թէ, սպաննուած է։

Խնդրոյնը պլանը, ինչպէս կը տեսնուի, հայերուն անպաստ ըլլալով—Յ-ի դէմ 1—կառավարութիւնը հարկ չէ տեսած իր բացարձակ «բարեացակամ չէզոքութենէն» շեղելու։ Դիտող

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԻ ՆԱՑԻՕՆԱԼԻԶՄԸ *)

(Մի էջ Դաշնակցութիւն կուսակցութեան ազանդական քաղաքականութենէն)

II

Ամեն անգամ, երբ այս կամ այն կազակցութեամբ խօսում էք թիւրքահայ հարցի մասին, կամայ-ակամայ վերարտադրում էք ձեր յիշողութեան մէջ անունը մի կուսակցութեան, որի ծագումն ու պատմական անցեալը անքակտելիօրէն շաղկապված են թիւրքահայ ժողովրդի քաղաքական ճակատագրի հետ։ Ո՞վ կարող է ուրանալ օրգանական օղակը թիւրքահայ հարցի և դաշնակցական կուսակցութեան միջև. ո՞վ չի խոստովանի պատմական մոմենտների այն երկաբաթիդ շղթան, որ հայկական հարցի ու կուսակցութեան վիճակները զուգաւորել է մի հունի մէջ։

Թէ ինչ ուղղութեամբ են արտայայտվել Դաշնակցութեան մտածելակերպը ու գործելակերպը թիւրքահայ հողի վրա նախկին տարիներում՝ իր անլեգալ կազմակերպութեան ու գոյութեան շրջանում, դրա վրա չենք կորցնի այստեղ մի խօսք անգամ, իբրև հրապարակով արդէն բաւականաչափ տարրալուծված ու պարզաբանված մի հարց, իբրև այժմէականութիւնից արդէն զուրկ սոսկ պատմական-արխիվիստ մի խնդիր։ Մենք ցանկանում ենք մի քանի թռուցիկ ակնարկներով ծանրանալ այդ կուսակցութեան վերջին տարիների քաղաքականութեան ուղղութեան վրա՝ բնոյթագծելով նրա էութիւնն ու որակը։

Ամեն անգամ, երբ ցանկանում էք շոշափել և պարզել ձեզ Դաշնակցութեան գործունեայ գնացքը... խաղաղ...

Մթթէ մենք ըմբոստ ենք։

Մթթէ մենք միշտ խաղաղասէրներ եղած չենք։

Գործեցէք... խաղաղ...

Գուցէ դա ակնարկութիւն է կենտրոնական ժողովի մասին։

Եթէ այո, դա անտեղի և անհիմն ակնարկութիւն է։

Այն, ինչ որ եղել է մեր կենտրոնական ժողովում, եղել է ամեն տեղ։ Խոհեմութիւնը պահանջում է մոռանալ այդպիսի դէպքեր, որոնք ժամանակաւոր բնաւորութիւն ունէին, որոնք անցան, ինչպէս հողմը անցնում է, գնում և անհետանում։

Հայերը միշտ խաղաղասէր են եղած։

Ըմբոստութիւնը հակառակ է հայի բնաւորութեանը, մտքին, սրտին, հոգուն...

Եթէ դիւանը դիմելով մեզ՝ շեշտում է, որ մենք խաղաղ լինենք, արդեօք ինչ կարծիք պիտի ունենան մեր մասին օտարները։

Օտարները կասեն. ինչ հրէշներ են հայերը, եթէ էջմիածնի դիւանը դիմելով թեմական դպրոցների հոգաբարձուներին, ընտրեալներին, խնդրում է լինել խաղաղասէր...

Երբ Նոր-Նախիջևանի հոգաբարձական ժողովում քարտուղարը կարդաց շրջաբերականը և հասաւ «խաղաղ» խօսքին, բոլոր ներկայ եղողներս իրար երեսի նայեցինք, նայեցինք և ցաւեցինք, ցաւեցինք, որ դիւանը մոռանում է հայերէն մտածել և գրել...

II

Հայերէն մտածել, գործել, գրել մոռացել են և հայ ուսուցիչները, Երևանի այն քանանհինգ ասպետները, որ քաջարկված հրապարակ եկան հայի դատը պաշտպանելու համար...

Թուրքը չէ հայի թշնամին և ոչ քիւրդը... Մեզ վտանգը սպառնում է... էջմիածնից...

Հայի իրաւունքները խլել է, իւրացնում է... էջմիածինը...

Ժողովրդի թշնամին էջմիածինն է... մենք բողոքում ենք... մենք չենք ճանաչում էջմիածինը... մենք ընդդիմում ենք Թիֆլիսի յանձնաժողովը...

Մենք... մենք...

Ովքե՞ր էք դուք, քանանհինգ խեղճ հոգիներ, որ այսօր մոռացել էք այն, ինչ որ լաւ գիտէիք ձեր աշակերտական նստարաններում, երբ ցաւած սրտերով տեսնելով մեր հազար ու մէկ թշուառութիւնները՝ մտածում էիք, թէ թուրքն էլ թակում է Վարդանին, հայն էլ թակում է Վարդանին...

Այո, Վարդանին...

Ո՞վ է այդ Վարդանը, խեղճ ինքնակոչ ասպետներ...

Մենք ենք այդ Վարդանը, ժողովուրդը, խեղճ հայ ժողովուրդը, որի իրաւունքները իբր թէ դուք պաշտպանում էք, մինչդեռ զուք այդ իրաւունքները ոտնակոխ էք անում յանուն ձեր անձնական կրքերի, ճիգ թափելով տապալել այն, ինչ որ առանց ձեզ էլ մեր թշնամիները աշխատում են տապալել և ոչնչացնել...

Թող թակի քեզ թուրքը, Վարդան, ոչինչ, թուրքը երբ մեզ սիրել է, խղճացել է. դու կը տանես քո տառապանքդ, կը տանես անվեհեր սրտով, բայց ինչու, ինչու թակեն քեզ քանանհինգ հայ ուսուցիչներ, Վարդան Ջան...

Վաղ է մեռել անմահ Սերվանտեսը։ Ինչու չը տեսնէիր մեր քանանհինգ հայ Դոն-Քիշոտներին, որոնք իրանց գրիչները—սուրերը դարձնում են այսօր ոչ թէ ջրաղացքի դէմ, այլ էջմիածնի հին, մաշված, խարխուլ պատերի դէմ...

Աշխատեցէք, աշխատեցէք քանանհինգ հայ ուսուցիչներ, դուցէ ձեր աշխատանքը պըտակվի և պատերը փշրվեն, փլվեն...

Ամաչեցէք գոնէ խօսել հայ ժողովրդի բերանից։ Միայն մեր ամենամեծ թշնամին կը գրէը և կը ստորագրէը ձեր գրածը...

Ժողովուրդը ձեզ պէս խելօքներ շատ է տեսել, համբերել և տարել...

Չէ որ ժողովուրդը այն Վարդանն է, որին թակում է և ոխերիմ թուրքը, և ձեզ պէս խելօք հայերը...

III

Այնքան սիրում եմ լսել հայր Բենիկի քարոզները։

Աստուածային կրակը վառ պահած սրբոտում, ոգեորված, միշտ յուզված՝ նա խօսում է այնպէս, որ կարծես երգում է մի զեղեցիկ երգ և լսողը միայն մի բանից է վախենում, որ այդ երգը կը վերջանայ, հայր սուրբը կը դադարեցնէ իր խօսքը։ Լսում է հայրս-սուրբը, իսկ երգը կարծես շարունակվում է։ Այժմս այդ երգը մեր մտքումն է, սրտերի խորքերում։

Մեր հայ հոտաւորների կարգում Բենիկ վարդապետը առաջին տեղերից մնում է փայլում իր տաղանդով։

Հիանալի է խօսում հայր Բենիկը։

Բայց արդեօք հայր Բենիկը գիտէ... գրել... գրել հայերէն, մտածելով հայերէն...

Անշուշտ գիտէ, թէև... թէև պահ մի մոռացել է...

«Մշակի» էջերում հայր սուրբը գրում է։

«Նիւթական միջոց չունէի և ինձ համար շատ ծանր օրեր էին վրա հասել։ Որովհետև ես Էջմիածնին անպէտք եմ եղել, ուստի Մայր Աթոռը կարևոր չը համարեց, ինձ նպաստ տալ։

Հայր սուրբը, որին ես ճանաչում եմ և բարձր գնահատում, կարդալով իր այս տողերը՝ պիտի խոստովանէ այժմ, որ միայն «ծանր օրերը» պատճառ են եղած այդպիսի ոճ բանեցնելուն... հրապարակով, մամուլի միջոցով...

Թող այն 25 ուսուցիչները, էջմիածին ասելով, հասկանան էջմիածնի պատերը և կամ մի քանի միաբաններին։ Էջմիածինը հայր Բենիկի համար՝ պիտի լինի, մնայ մի նուիրական, մի սուրբ պաղատարբ, մի զեղեցիկ դրօշ։

Փոյթ չէ, եթէ այդ դրօշի շուրջը ժողովված են զինուորներ, որոնք բարձր չեն կանգնած իրանց կոչման մէջ, դրօշը դրօշ է և դրօշ պիտի մնայ... Զանպատուենք նրան, չը ցածացնենք նրան...

Մենք զարմանում ենք և ցաւում, որ էջմիածնի միաբանները չը կարողացան ըստ արժանաւոյն գնահատել հայր Բենիկին և չօգնեցին նրան, երբ սև ու ծանր օրեր էին վրա հասել։ Մենք իրաւունք ունենք խմանալու թէ ինչու այդ միաբանները մնացին խուլ՝ հայր Բենիկի դիմումներին։

Իսկ եթէ Միլիոններ, Ղուկասեաններ, Խունունցներ, Վարազեաններ չը լինէին, մթթէ հայր Բենիկի պէս տաղանդաւոր հոտաւորը պիտի հիւանդ մնար մեր միաբանների անփութութեան պատճառով։

Տաղանդաւոր հոգևորականները սակաւ են մեզանում։

Պէտք է նրանց սիրել, յարգել, գնահատել...

Թող այդ կողմից էջմիածնի միաբանները օրինակ ցոյց տան մեր ժողովրդին։ Թող նրանք ապացուցանեն, որ գիտեն տաղանդաւորներին ճանաչել...

Գուցէ միաբանները տաղանդաւորներին աւելորդ են համարում իրանց շրջանում...

Դր. Ջալխուշեան

*) Տես «Մշակ» № 222.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՌԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՑԵՐԷՆ ԳՐԵԼ...

—

Մայր-Աթոռի գլուխը քարոզում է... խաղաղութիւն։ Երևանի քանանհինգ ուսուցիչները մոռացել են, որ թուրքն էլ թակում է Վարդանին, հայն էլ։ Հայր-սուրբ Բենիկը լաւ է խօսում, բայց գրել մոռանում է փոքր ինչ։ Դրօշը դրօշ է և դրօշ պիտի մնայ։

I

Հայ ժողովուրդը մոռանում է հայերէն խօսել, հայագէտները մոռանում են հայերէն գրել։

Ահա ձեզ տխուր փաստեր...

Նորին Սուրբը Օծութիւն Վեհափառ Կաթողիկոսի դիւանը սեպտեմբերի 7-ի շրջաբերականում, դիմելով մեր հոգևոր թեմական դպրոցներին, գրում է՝

«Ի նկատի ունենալով վերջին տարիների փորձերը և մեր դպրոցների նպատակը և այդ կարգի բոլոր դիտողութիւններով դալ Մայր-Աթոռ խաղաղ և արդիւնաւէտ կերպ գործ կատարելու յօգուտ մեր հոգևոր թեմական դպրոցների կազմակերպութեան և կանոնաւոր կեանքի»։

«Խաղաղ... կերպ»... խաղաղ...

Ի՞նչ է նշանակում դա։

Երբ սրանից մի քանի ամիս առաջ մայրաքաղաքի հայատեաց լրագիրը մեր Վեհին վերագրեց այնպիսի մտքեր, թէ մեր հոգևորականութեան և ժողովրդի մի մասը խաղաղ չէ, մենք վրդովվեցինք, ցաւեցինք և ուրախ էինք կարդալ Վեհի հերքումը այդ մասին։

Այժմ դիւանը, դիմելով թեմական դպրոցների հոգաբարձուներին, շեշտում է՝ եկէք, մենք սպասում ենք, բայց, ի սէր Աստուծոյ, գործեցէք խաղաղ կերպով...

Գործեցէք... խաղաղ...

Մթթէ մենք ըմբոստ ենք։

Մթթէ մենք միշտ խաղաղասէրներ եղած չենք։

Գործեցէք... խաղաղ...

Գուցէ դա ակնարկութիւն է կենտրոնական ժողովի մասին։

Եթէ այո, դա անտեղի և անհիմն ակնարկութիւն է։

Այն, ինչ որ եղել է մեր կենտրոնական ժողովում, եղել է ամեն տեղ։ Խոհեմութիւնը պահանջում է մոռանալ այդպիսի դէպքեր, որոնք ժամանակաւոր բնաւորութիւն ունէին, որոնք անցան, ինչպէս հողմը անցնում է, գնում և անհետանում։

Հայերը միշտ խաղաղասէր են եղած։

Ըմբոստութիւնը հակառակ է հայի բնաւորութեանը, մտքին, սրտին, հոգուն...

Եթէ դիւանը դիմելով մեզ՝ շեշտում է, որ մենք խաղաղ լինենք, արդեօք ինչ կարծիք պիտի ունենան մեր մասին օտարները։

Օտարները կասեն. ինչ հրէշներ են հայերը, եթէ էջմիածնի դիւանը դիմելով թեմական դպրոցների հոգաբարձուներին, ընտրեալներին, խնդրում է լինել խաղաղասէր...

Երբ Նոր-Նախիջևանի հոգաբարձական ժողովում քարտուղարը կարդաց շրջաբերականը և հասաւ «խաղաղ» խօսքին, բոլոր ներկայ եղողներս իրար երեսի նայեցինք, նայեցինք և ցաւեցինք, ցաւեցինք, որ դիւանը մոռանում է հայերէն մտածել և գրել...

II

Հայերէն մտածել, գործել, գրել մոռացել են և հայ ուսուցիչները, Երևանի այն քանանհինգ ասպետները, որ քաջարկված հրապարակ եկան հայի դատը պաշտպանելու համար...

Թուրքը չէ հայի թշնամին և ոչ քիւրդը...

ծելակերպի որևէ կողմը, անհրաժեշտօրէն ցցվում է ձեր առաջ սօցիալ-հոգեբանական մի առեղծուած և պահանջում իր հանգամանօրէն լուծումը։ Առեղծուածը սօցիալական է և ոչ անհատական, որովհետև գրաբծելակերպի հեղինակը սոսկ անհատ կամ զատ-զատ անհատներ չեն, այլ ստուար զանգուածի կամ գէթ սրա ղեկավար իդէօլոգների և պրակտիկների մի «կուռ» միութիւն։ Իսկ նա՝ այդ առեղծուածը հոգեբանական է, որովհետև դուք ամէն դէպքում հարկադրված էք քննել ու վերլուծել այն սպեցիֆիկ մօտիվները, այն ներքին մղումները, որոնք արմատդրում կամ հարկադրում են գրաբծելակերպի հեղինակին այս կամ այն կուսակցական քայլն անել։ Դուք չափազանց ապարդիւն աշխատանք կը թափէք, եթէ փորձէք որոշ օբիեկտիվ սկզբունքների ու ծրագրային հիմունքների պահանջած մեթոդով ըմբռնելու հոգեբանական առեղծուածի հեղինակի գրաբծելակերպի էութիւնը։

Գաղափարային սկզբունքները և սրանց հիմքերի վրա կառուցած ծրագրային շէնքը, որ ցոլացնում է իր մէջ որոշ կուսակցութեան աշխարհայեացքը, հիմնապէս մնում են անփոփոխ, քանի փաստապէս չեն կիրառվել կեանքի մէջ՝ յայտարարված պօստուլատները, անփոփոխ՝ որ պետութեան և ի՛նչ բէժիմի օրով ուզում է թող լինի։ Եւ իր ծրագրային սկզբունքներին հաւատարիմ կուսակցութիւնը, եթէ թանգ է գնահատում նա իր դաւանած աշխարհայեացքը, չի ընթանայ ոչ մի թեք մակարդակով, որքան էլ հրապուրիչ լինի տուեալ մթնոլորտը և ձգողական՝ ակնթարթային շահերը։ Եթէ լաւ ուսումնասիրել էք ծրագիրն ու մտածելակերպը մի այդօրինակ կուսակցութեան, ապա կարող էք դուք շատ յաճախ ամենայն ապահովութեամբ վաղօրօք ասել, թէ այս-ինչ խոշոր երևոյթի կամ կարգինալ հարցի վերաբերմամբ ինչ դիրք պէտք է բռնէ սկզբունքային կշռաչափով անխախտ ու անշեղօրէն ընթացող կուսակցութիւնը։

Միանգամայն այլ է հոգեբանական առեղծուածների հեղինակի ընտրած ուղին. սա զոր-մոլոր է, զիկ-զակ, ամէն բան, բացի ուղղաձիգ լինելուց։ Այդտեղ կանոնը շեղումների ուղին է, իսկ բացառութիւնը սկզբունքային հետեւողականութիւն։ Որտեղ իշխում է առեղծուածային ցանցը հոգեբանական մօտիվների, այնտեղ գոյութիւն չունեն կօնսիքուենտ մտածելակերպ և գրաբծելակերպի օբիեկտիվ պլատֆորմ։ Դուք, օրինակ, անկարող կը լինէք կանխօրէն ասել, թէ ի՛նչ դիրք կը բռնէ այդպիսի ուղիով ընթացող կուսակցութիւնը այս կամ այն խոշոր սկզբունքային երևոյթի նկատմամբ, որովհետև ոչ թէ ծրագիրը, դաւանած աշխարհայեացքը, եթէ ունի նա առհասարակ, այլ կուսակցական պրեստիժի, տիրական դիրքի հարցն է ուղեցոյց ծառայում նրա՝ այս-ինչը ընդունել, այն-ինչը մերժել լօզունգներին։ Կուսակցական ես-ի հասարակական կրեդիտ.—ահա այն առանցքը, այն պաշտամունքի առարկան, այն մեծարված սֆինքսը, որի համար և որի անունով կարող են զոհաբերվել շատ «տեսական իդէալներ», փոյթ չէ դա այն կուսակցութեան համար, որի փաստական դաւանանքի, այն է՝ վուլգար ուտիլիտարիզմի կորիզը կազմում է կուսակցական շահերի տիրական ու տեսական ապահովումը՝ հասարակական մրցութիւնների շուկայում։

Այսպէս, մենք համառօտ ուրուագծեցինք վերջին պասուների մէջ գրաբծելակերպի էութիւնը երկու կարգի կուսակցութիւններին, որոնք տրամագծօրէն հակառակ կոչումներ ունեն։ Մէկը իշնում է հրապարակ հասարակական որոշ իդէալի անունով և սօցիալական որոշ դասակարգի շահերի պաշտպանութեան համար. ինքը կուսակցութիւնն է իդէալի համար և ոչ հակառակը. նրան ծառայելու և փաստօրէն իրականացնելու ձգտումներով ու տենչանքով կուում է նա հակառակորդ բանակների դէմ։

Միւս տիպի կուսակցութիւնը, ընդհակառակը, իջնում է հրապարակ հասարակական իդէալի ֆիրմայի տակ և նրան ծառայեցնում իր կուսակցական նպատակներին. իդէալն է իր համար եւ ոչ ինքը իդէալի համար. իդէալի ձևական անունը և ոչ փաստական պարունակութիւնն է այդ-օրինակ կուսակցութեան համար կարևորը։ Ոչ թէ հասարակական իդէալի բաղդրիչ մասնիկները քայլ առ քայլ իրականացնելու սրբազան միսսիան է նրան գործի հրող խթանը, այլ կուսակցական հզօրացման եւ կատեգօրիկ տիրապետութեան այրող շահերը։

Աւելին ասենք։

Առաջին տիպի կուսակցութիւնը, կանգնած իր գաղափարական բարձրութեան վրա՝ պահպանում է ուղիղ ու ներդաշնակ յայտարարութիւն իր մտածելակերպի և գրաբծելակերպի միջև, խստագոյնս հետեւում է իր կուսակցական բանակն ամփոփող սօցիալական զանգուածի անաղարտ պահպանութեան, խուսափում է անհաշտ ու հետեւողէն էլեմենտների վտանգաւոր անդամագրութիւնից, զոհում է ակնթարթային շահերը իր սկզբունքային մաքրութեան և արհամարհում վերին հեղինակութիւնների հրապուրիչ առաջարկները՝ յանուն իր ծրագրային անշեղ հետեւողականութեան։

Միանգամայն հակառակ պատկերն ենք դանում երկրորդ տիպի կուսակցութեան մօտ։ Նա կը զրկէր իրան գործնական օգուտների փառահեղ շանսերից, եթէ երբեւիցէ գաղափարական բարձրութեան վրա ամուր դիրք բռնելու փորձն անէր։ Այդպիսի կուսակցութեան մտածելակերպը այլ բան չէ, բայց եթէ պատրաստի դօգմայի պարապ բարբառում և ձրի տրակտատ։ Իսկ նրա գործելակերպը բըղխում է հոգեբանական առեղծուածների ցանցաձև բովից։ Նա չունի անդամագրական ընտրութեան անգամ թոյլ նօրմաներ, որովհետև առաջնորդվում է պրագմատիկ տեսակէտներով,—թող գան բոլորը՝ ինչ «հաւատից» և խաւերից ուզում են լինեն, միայն թէ դրանցից կազմված «միահամուռ» կօնգլօմերատը կարողանայ բարձրացնել կուսակցութեան փաստական ոյժը, տիրական ազդեցութիւնը եւ սպեկուլանտ ձեռնարկների թափն ու աջողութեան մակարդակը։ Առօրեայ տակտիկայի մէջ օպպօրտիւնիստ է այդ տիպի կուսակցութիւնը մինչև ոսկորների ծուծը. ըստ եւրոպէին անգիտակցաբար նահատակում է նա ծրագիր և սկզբունք, եթէ տուեալ մօմենտը խոստանում է նրան շօշափելի շահերի և՝ այսպէս անուանված՝ կուսակցական կարիերայի փայլուն պերսպեկտիվներ։

Եթէ երկու տիպի կուսակցութեան մեր այս համառօտակի քարակտերիստիկան մըշակված տերմիններով արտայայտէինք, կասէինք հետեւեալը.

Առաջին կարգի կուսակցութիւնը գաղափարական է իր դաւանած աշխարհահայեացքի սկզբունքային պարունակութեամբ, հետեւողական՝ իր մտածելակերպի և գրաբծելակերպի ներդաշնակութեամբ, հաւատարիմ իր ծրագրին՝ ընտրած պլատֆորմի որակով, պատրաստ զրկանքների եւ զոհաբերութիւնների՝ յօգուտ և յանուն իր դաւանած հասարակական իդէալի անդաւաճան, անաղարտ պահպանման։

Երկրորդ կարգի կուսակցութիւնը երկրպագու է գործնական շահերի, սիրահար ու նախանձախնդիր՝ իր հասարակական հմայքի արտաքին փայլին, իր հզօր ու ջախջախիչ տիրապետողների՝ բոլոր սրբութիւնների գնով. նա պրագմատիստ է, ուտիլիտարիստ, օպպօրտիւնիստ, կարիերիստ և Geschäftsmann-ի չափ սպեկուլանտ։

Մեր ընթերցողներից նրանք, որոնք խոբազգաց ու գիտակցաբար կրել են իրանց ուսերի մեր իրականութեան վերջին տասնամեայ պատմութիւնը և ջղաձգօրէն հետեւել արձանագրվող փաստերին ու հրապարակական քննադատութեան, իրանք պիտի հետեւցնեն մեր նախորդ տեսական ընդհանրացումներից հարկաւոր եզրակացութիւնը, թէ յիշածս երկու կուսակցական տիպերից որին է պատկանում Դաշնակցութիւնը իր ողջ տեսական ու գործնական մեծութեամբ։ Մինչ ընթերցողները իրանց ընտրութիւնը կանեն, մենք անցնենք մի այլ գլխի, բայց անենք գործնական կեանքից մի այլ՝ նոյնքան հետաքրքրական, որքան և այժմէական, էջ, ու փորձենք ակնյայտնի փաստական նմուշներով մեր տուած քարակտերիստիկան աւելի խտացնելու։

Intimus

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ «ՊԷՊՕՅԻ» ԱՐՁԱՆԻ

«Մշակի» № № 148, 160, 183, 186, 195, 208 և 209-ի մէջ տպված ցուցակների համաձայն մինչև սեպտեմբերի 21-ը ստացել էինք 578 ր. 34 կ., այժմ ստացանք Թիֆլիսի քաղաքային վարչութիւնից, պակի փոխարէն որոշված մի հարիւր (100) ռուբլի։ Ուրեմն ընդամենը ունինք 678 ր. 34 կոպէկ։

Այս առիթով խմբագրութիւնս խնդրում է բոլոր այն հաստատութիւններին, որոնք խոստացել են պակի փոխարէն արժէքը տալ «Պէպօյի արձանի» համար, շտապել հասցնել գումարը մեզ։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Շաբաթ օր, հոկտ. 13-ին, Էջմիածնում կայանալիք ազգային-պատմական մեծ յօբելեանի տօնախմբութեան առիթով վաղը, հինգշաբթի, ամսիս 11 ին, երեկ. ժ. 7-ին, Մանթաշեանի առևտրական դպրոցի դահլիճում կայանալու է մի մեծ խորհրդակցական ժողով, որ պէտք է զբաղվի Թիֆլիսի հայ հասարակութեան և ինտելիգենցիայի մասնակցութեան խնդրով և մի յանձնաժողովի ընտրութեամբ։

Հրաւիրված են բազմաթիւ բժիշկներ, փաստաբաններ, ուսուցիչներ, քահանաներ, առևտրականներ, արհեստաւորներ, բանւորներ և ազգային-կուլտուրական, բարեգործական հաստատութիւնների ու հայ մամուլի ներկայացուցիչները։

Հոկտ. 13-ին Ներսիսեան և Յովհաննեան դպրոցներում կը կայանան դպրոցական-գրական հանդէսներ հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի միացեալ յօբելեանի առիթով։

Մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հանդէսները կը կայանան նաև Նոր-Նախիջեւանի և Շուշու թեմական դպրոցներում, ինչպէս և Թաւրիզի Արամեան դպրոցում։ Առ այժմ տեղեկութիւն չը կայ միայն Երևանի թեմական դպրոցի մասին, բայց անհաւանական է թւում, որ այդ թեմական դպրոցը թոյլ տայ իրան անկարգապահութեան օրինակ տալ և չենթարկվել ընդհանուր կարգադրութեան։

Կ. Պոլսի հայոց ազգային կենտրօնական վարչութեան Ուսումնական Խորհուրդը պաշտօնական գրութեամբ յանձնարարել է հայ բանասէր Ս. Մալխասեանցին գնալ Էջմիածին և մասնակցել հոկտ. 13-ի մեծ տօնին յանուն ազգային վարչութեան։

Հայոց Միացեալ Ընկերութիւնը լիազօրել է պ. պ. Հ. Առաքելեանին, Ալ. Քալանթարին, բժ. Շեսեանին, բժ. Կ. Ստեփանեանին և Յ. Սպէնդիարեանին՝ գնալ Էջմիածին, իբրև ներկայացուցիչներ ընկերութեան և մասնակցել ազգային մեծ տօնին։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը պաշտօնական գրութեամբ 5 հոկտեմբերի (ն. տ.) լիազօրել է պ. պ. Հ. Առաքելեանին և Ս. Կիւլպէնկեանին՝ գնալ Էջմիածին, իբրև պատուիրակներ Միութեան և մասնակցելով մեծ յօբելեանին, մատուցանել Վեհ. Կաթողիկոսին Միութեան կենտրօնի, հարիւրաւոր մասնաճիւղերի և հազարաւոր անդամների սրտագին շնորհաւորութիւնները։

Միութիւնը յայտնում է, որ նա իր մասնակցութիւնն ևս կը բերէ ձեռնարկված դպրոցական ֆօնդին։

Միութեան կենտրօնական վարչութեան ժողովը յայտնում է, որ եթէ ինքն առաջ որոշել էր կատարել նոյեմբերի 26-ին տօնը, Թիֆլիսի յանձնախմբի յայտարարութեան վրա, այժմ յետ է վերցրել իր այդ որոշումը, քանի որ «ոչ մի պատճառ չունի մասնակի հանդիսութիւնները նախընտրելու, ցորքան Վեհ. Կաթողիկոսի նախագահութեամբ պատմական կրկին դէպքերը պաշտօնապէս և ազգովին կը տօնուին ս. Թարգմանչաց յիշատակելի տօնի օրը։ Ուստի, միութիւնը սիրայօժար պիտի մասնակցի ազգային այդ մեծ տօնին և ինչպէս կեդր. ժողովը՝ Միութեան մասնաճիւղերն ևս միաժամանակ կարտայայտուին այդ պատմական օրը»։

Բոլոր այս տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հոկտ. 13-ի տօնին մասնակցում է Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Եգիպտոսի հայութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Թիֆլիսի Կաղէտների Կօրպուսում մաղթանք կատարվեց Հայրենական պատերազմում ընկած զոհերի յիշատակին։ Ապա եղան դասախօսութիւններ պատերազմի 100-ամեայ յօբելեանի մասին։

✦ Փոխարքայի պալատի դիմաց գտնվող հասարակական գրադարանի մեծ շինութիւնը քանդվեց և նրա տեղում կառուցանվելու է նորը։ Աշխատանքները յանձնված են ինժենէր Նեպրինցևին։

✦ Դերբենտի կողմից Պեռական Դումայի պատուիրակ է ընտրվել նախկին պատգամաւոր Հէյդարօվը։

✦ Բաքու է եկել ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Ռուխլօվը։

✦ Թուրքիայի գեն.-հիւպատոսարանը Թիֆլիսում յայտարարել է ի գիտութիւն եւրօպական վիլայէթների թուրքահպատակ պահեստի զինուորների, որ նրանք կանչվում են զէնքի։ Տեղեկութիւններ կարելի է առնել գեներալ-հիւպատոսարանից։

✦ Վաղը, իշխ. Ա. Սումբատով Իւժինի յօբելեանի առիթով Թիֆլիսի Արտիստական թատրօնում Զարէշևի խումբը կը ներկայացնէ «Закатъ» 4 գործ. կօմէդիան։

✦ Բաքուի քաղաքագլխի պաշտօնի համար տալիս են 3-րդ Դումայի անդամ Իվօլգինսկիի անունը, որ եղել է նաև կովկասեան ջրերի կառավարչի պաշտօնում։

✦ Վաղը, հինգշաբթի, Ժողովրդական Տանը հայկական սեկցիան խաղում է առաջին անգամ հայ բեմի վրա Լ. Անդրէեվի յայտնի պիէս «Մեր կեանքի օրերը» կամ «Ուսանողի սէրը», որը անցեալ տարինեռում մեծ աջողութիւններ ունեցաւ և ընդունելութիւն գտաւ ռուսաց և վրաց բեմերի վրա։ Տեղերի գները սովորականն են։

✦ Թիֆլիսում յունվար ամսից բացվելիք վաճառականների բանկի մէջ պաշտօնները գրաւելու համար վաճառականների աւագ Ա. Ն. Միլեանի անունով ստացվել են աւելի քան 150 խնդրագիր Ռուսաստանի զանազան տեղերից։ Ընդամենը ընտրվելու են 25 ծառայող։

✦ «Т. Л.»-ը գրում է, որ Մանթաշեան և ընկ. տան գրասենեակը Բաքուից փոխադրվելու է Պետերբուրգ։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորակոչական ատեանը իր գործողութիւնները կը սկսէ այս տարի հոկտ. 17-ից։

✦ Այս շաբաթ օրը Թիֆլիսի հասարակական ակումբում կը լինի միայն ընտանեկան երեկոյ սինեմատօգրաֆով։

✦ Թիֆլիսում կազմակերպվեց ֆիզիկա աւանդողների միութիւն։

✦ Զուբալօվեան Ժողովրդական Տանը ռուս երաժշտասէրների խումբը հոկտեմբերի 23-ին կը ներկայացնէ «Կարմէն» օպէրան։

✦ Անդրկովկասեան երկաթուղիների ձերմերային երթեւեկութիւնը սկսվելու է հոկտ. 15-ից։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայոց ներկայացում

Երկուշաբթի, հոկտ. 8-ին, տեղի ունեցաւ հայկական թատրօնի սեզօնի բացումը Արտիստական Ընկերութեան թատրօնում Շիրվանզադէի «Կործանվածը» դրամայով։

Այդ դրամայի բովանդակութեան հետ ծանօթ են «Մշակի» ընթերցողները անցեալ տարվանից, երբ առաջին անգամ նա ներկայացվեց բեմի վրա։

Այս տարի Հայոց Դրամատիկական Ընկ. խումբը բաժանվել է երկուսի. մի մասը գործում է Թիֆլիսում Ա. Արմէնեանի բէժիսէօրութեամբ, միւս մասը Բաքու՝ տ. Սիրանոյշի ղեկավարութեամբ։

Կարծիք կար, որ խումբը այդպէս բաժանված լինելով, նա թոյլ պէտք է լինի Թիֆլիսում, ինչպէս և Բաքուում։ Սակայն առաջին ներկայացումը ցոյց տուեց, որ այդ կասկածները անտեղի են և խումբը իր ներկայ կազմով կարող է զոհացում տալ հասարակութեան։ Պէտք է ասել, որ առաջին ներկայացման համար պիէսն ևս աջող էր ընտրված անկասկած։ «Կործանվածը», որ այս անգամ տրվեց առանց կրճատումների, Շիրվանզադէի աջող երկերից մէկն է թէ գաղափարի և թէ բեմականութեան կողմից։

Սենեքերիմ Սահակունու դերը Արէլեանը խաղաց աւելի քան գեղեցիկ. նա պատկերացրեց 60-ական թւականների մաքուր և անշահասէր գործչի, ինչպէս և առաջին հայ յեղափոխականի տիպը։ Ալիխանեան, որ խաղում էր Արտաշէսի՝ հայ սօցիալիստի դերը, կարողացաւ նոյնպէս հաւատարիմ մնալ ընդգծած տիպին և նրա Արտաշէսը թողեց հասարակութեան վրա զօրեղ տպաւորութիւն։

Տիկին Արմէնեան նոյնպէս շատ գեղեցիկ կերպով ներկայացրեց Ֆլօրային, իսկ Մ. Մանուէլեան, որ ներկայացնում էր Հրանտին, կարելի է ասել անզուգական էր իր դերի մէջ։

Ներկայացումը վերջացաւ ժամը 11-ին և հաճելի տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա։ Սկիզբն աջող է, իսկ աջող սկիզբն գործի կէսը կատարել է նշանակում։

Մնում է, որ հասարակութիւնը խրախուսէ խումբը՝ յաճախելով հայոց ներկայացումները։

Հ. Ա.

Օպէրա

Գերմանացի յայտնի երաժշտագէտ Մէյէրբերը, ի թիւս այլ իր գրուածքների, ունի «Հուգենօտներ» օպերան ևս, որի պատմական նիւթի հետաքրքրութիւնը զուգորդվում է գեղեցիկ հարմոնիայով ու հարուստ մէլիօդիայով երաժշտութեան հետ։ Այդ է պատճառը, որ ներկայումս իսկ ամէն անգամ «Հուգենօտներ» օպերան գրաւում է մեծ թւով հասարակութիւն։

Շնորհակալ պէտք է լինել Պալեվից, որ «Հուգենօտների» նման լուրջ օպերաները կրկնում է, մանաւանդ այնպիսի ուժեղ անսամբլով, ինչպէս տեսանք հոկտ. 8-ին։ Տ. Ալեքսիոյի և Լազարեվի մասնակցութիւնը, որոնց մենք տեսանք անցեալ տարի Նոյն «Հուգենօտների» մէջ միևնոյն դերերում, ինչպէս և այս անգամ, արդէն գրաւական էր, որ պիէսը կը թողնի իր սովորական ուժեղ տպաւորութիւնը։ Սակայն այս տարի թագուհի Մարգարիտա դէ-Վալուան դերում հանդէս եկաւ շնորհալի երգչուհի Սարանէվան, որ օրէ-ցօր գրաւում է Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեան ջերմ համակրութիւնը։ Թէև երգչուհուն պակասում է ընական ուգեորութիւն, սակայն նրա վոկալ կողմը ամբողջացած, սահուն, ռիթմով—թողնում է իր համակրելի տպաւորութիւնը և ցոյց տալիս, որ երգչուհին շատ կարևոր ոյժ է ներկայ օպերային խմբի մէջ։

Նրա պարտնեօր Լազարեվը (Բաուլ) այն արտիստներից է, որ հէնց սկզբից մտնում են իրանց դերի մէջ և իւրաքանչիւր նօտայի մէջ մտցնում են զգացմունք։ Դեռ չենք ընդգծում յարգելի դերասանի մտածված խաղը, որ մշտական է նրա մէջ։ Բացի այդ Լազարեվի ձայնի տեմբրը մի տեսակ գրաւիչ ու թովիչ յատկութիւն էլ ունի։ Ու այս ամենը միասին արդարացնում են այն անուանի համբաւը, որ արտիսը վայելում է իրաւամբ Թիֆլիսում։

Այէշկան պահել է և դեռ մշակել իր ուժեղ դրամատիկական սօպրանօն, որ նոյնպէս ունի հմայիչ կողմ։ Վալէնտինայի հոգեկան տանջանքներով լի դերը սազում է իսկապէս նրան, և նա այդ տանջանքների կենդանի արտայայտութիւնը տուեց վերջին գործողութեան մէջ, երբ բորբոքված սէրը ամէն կերպ կամենում է յետ կասեցնել Բարթուլոմէոսեան գիշերվայ զոհերի կողմը վազող Բաուլին։

Վալէնտինայի հօր դերակատար Կայդանովը մի համակրական ոյժ է ներկայանում։ Ամբողջ 4 գործողութեան մէջ էլ նրա խաղը համաչափ էր, անսայթաք. իսկ երգեցողութիւնը աւելին չէր պահանջում։ Պէտք է ասել, որ այդ դերը համարեա ամենաղժուար դերերիցն է, սակայն Կայդանովը պատուով դուրս եկաւ նրանից։

Ամբողջութեան աջողութիւնը նպաստեցին օր. Բիլլի՝ իր քնքոյշ երաժշտական ձայնով, Դէրժաւին՝ իբրև Մարսէլ, և Եաբսլավսկի՝ կոմս Նիվէր։

Ընդհանրապէս դերակատարները մասն իրանց դերերի մէջ երկրորդ գործողութիւնից։

Պիէսի բարդ պահանջներին բէժիսէօրական մասը պատասխանել էր լրիւ կերպով։

Հարթ անցաւ և բալէտը։

Վաղը առաջին անգամ կը տրվի Զայկովսկիի «Օրլէանի կոյսը» օպերան։ Ե.

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Մի համակրելի գրական երեկոյթ տեղի ունեցաւ երկուշաբթի, հոկտ. 8-ին Թիֆլիսի Ժողովրդական Տանը։

Երեկոյթը նուիրված էր ռուս ազատախոհ ամսագիր «Русское Богатство»-ի գրծողներին։

Առիթը նրա նշանաւոր աշխատակիցներից մէկի մահն էր, որը տեղի էր ունեցել ներկայ ամսում։

Դա Անենսկին էր, յայտնի՝ ռուս գրական աշխարհում իր մանուսկրիպտական և հասարակագիտական յօդուածներով, իր ազատասէր գաղափարներով։

Նրա մասին խօսեց Սօսնօվսկին, բնորոշելով հանգուցեալի բարեխիղճ, լուրջ գրծունէութիւնը և ազնիւ դէմքը։

Այնուհետև ճառեր և դասախօսութիւններ եղան Միխայլօվսկիի, Կօրօլենկօյի, Մելշինի և ուրիշ նշանաւոր գործողների մասին։

Պայմով բնորոշեց եօթանասնական և ութսունական թւերի գործողներին, բերելով զանազան հեղինակների երկերից հատուածներ, իբրև գրական նմուշներ։ Կօպլով բնորոշեց Եակուբովիչի ստեղծագործութիւնների էութիւնը։ Զելինսկիյ ցոյց տուեց Միխայլօվսկիի իբրև կենտրօնական մտաւոր ոյժի նշանակութիւնը։ Հեղինակին ուրուագծեց Կօրօլենկօյի գրական և հասարակական դէմքը։

Երեկոյթը գրաւել էր հասարակութեան մեծ բազմութիւն։

Բեմի վրա տեղաւորվել էին տեղական մամուլի ներկայացուցիչները։

Բացի բուն գրական մասից՝ կար և գրական-երաժշտական մաս, որին մասնակցեցին տիկ. Մինկէվիչ, պ. պ. Բաղալին և Վալենսկիյ։

Հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ թարմացնող և գեղեցիկ յիշողութիւններով օժտված գրական յիշողութիւնների հանդէսից։

Սիրող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 1 հոկտեմբերի

«Ղարաբաղի» խմբագրութիւնը հնարաւորութիւն չունենալով յատուկ գրութիւններով պատասխանելու բաժանորդներից ստացվող այն նամակներին, որոնցով խնդրում են յայտնել, թէ երբ է վերսկսվելու թերթի հրատարակութիւնը, սրանով յայտարարում է ի գիտութիւն բոլորի, որ թերթի հրատարակութիւնը կը վերսկսվի մօտիկ ապագայում։ Այնուհետև բոլոր բաժանորդներին բաւարարութիւն կը տրվի։

Խմբագրութիւն «Ղարաբաղի»

Էջմիածին, 2 հոկտեմբերի

Խնդրում եմ թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով յայտնել իմ խորին շնորհակալութիւնը Արմաւիրի ս. Գէորգ եկեղեցու եպիսկոպոս Գաբրիէլ Այվազեանին, որը ուխտ գալով իր ամուսին տ. Շուշանիկի հետ և յարգելով իմ յոբդորները համոզվեց սեպտեմբերի 29-ին իմ միջոցով ներկայացնելու Նորին Վեհափառութեանը 400 ր., որպէսզի երկաթէ խողովակներով հիւրատան առաջից ս. Գայիանէի վանքը մի փոքրիկ ջրի աղբիւր տրվի։

Այդ կարիքը մի զգալի պակասութիւն էր վանքի համար. շատ անգամ ուխտաւորները, նոյնիսկ վանահայրերը նեղութիւն էին կրում։

Վանահօր պաշտօն. ս. Գայիանէի վանքի՝ Երեմիա վ. Ստեփանեան

ՔՆՆԱԴԱՏԵԼՈՒԾ ԱՌԱՋ ՊԷՏՔ Է ԸՄԲՌՆԵԼ

Ծայրայեղ անհրաժեշտութիւնն ստիպում է ինձ խոնարհաբար խնդրել ձեզ տեղ տալ «Մշակի» էջերում այս յօդուածին, որի մէջ շօշափված խնդիրները իրանց սկզբունքային նշանակութեամբ, կարծում եմ, արժանի են ընթերցողների ուշադրութեան։

Ցուսով եմ, որ չէք մերժի ձեր թերթի սկզբունքային հակառակորդի խնդիրը, և հնարաւորութիւն կը տաք վերացնելու մի քանի կոպիտ թիւրիմացութիւններ, որոնք ծնունդ են առել հայկական անհեթեթ կասկածամտութիւնից։

I

«Գարուն» ալմանախի երրորդ գրական-քննադատական գրքում ես փորձել եմ ընդարձակ յօդուածով պարզաբանել Աւ. Ահարոնեանի ստեղծագործութեան գեղարուեստական արժէքն ու պատմական-հասարակական նշանակութիւնը։

Հեղինակի երկերի ամենամանրակրկիտ քննութեամբ ես աշխատել եմ ցոյց տալ գեղարուեստագէտի ուժեղ և թոյլ կողմերը այնպէս, ինչպէս ես եմ հասկանում, առանց որևէ կանխակալ միտումի և վստահօրէն պնդում եմ, «առանց զայրոյթի և աչառութեան»։

Յօդուածումս կիրք են զգացել իմ քննադատները և, առանց մտածելու, յայտարարել այն կուսակցական նեղ ոգու արգասիք, նախապաշարված մարդու կանխակալ դատավճիռ։

Բայց ճիշդ են հասկացել իմ կրքոտութիւնը պ.պ. քննադատները։

Բարեբաղդաբար, ես ամենևին չեմ մտածել նրանց գոյութեան մասին։ Գրել եմ միայն այն՝ ինչ որ մտածել եմ ու զգացել, արտայայտել եմ այնպէս՝ ինչպէս թելադրել են իմ խառնուածքն ու ոյժերը։ Եւ որովհետև մարդկային զնահատութիւնը միայն որոշ տեսակէտից է հնարաւոր, ես, բնականօրէն, մօտեցել եմ հեղինակին իմ գեղարուեստական և քաղաքական տեսակէտներից, որոնք, ի հարկէ, հանրապարտաւորական չեն։

Անկիրք պայքարը արամաբանական աբսուրդ է, և ես ջղային շարժումով եմ ձեռնոց նետել յանուն իմ գաղափարների։

Կարելի է միանգամայն չը համաձայնել ինձ—դա ճաշակի և հասկացողութիւնների խնդիր է—բայց կասկածել իմ վերաբերմունքի լաւորակութեան մասին դէպի Ահարոնեանը՝ կարող են միմիայն հայկական նախապաշարված ուղեղները, կամ, աւելի ճիշդ, անբարեխիղճները, որովհետև արևի լոյսից պարզ են արտայայտված իմ մտքերն այս խնդրի նկատմամբ։

Հակառակի պատճառով գերազանցօրէն զբաղվելով հեղինակի ստեղծագործութեան գեղարուեստական կողմով, ես մի քանի անգամ շեշտել եմ նրա քնարի հասարակական նշանակութիւնը, նրա կատարած դերը մեր պատմութեան դժոխային ժամանակաշրջաններից մէկում։ Եւ այնտեղ, ուր Ահարոնեանը գեղարուեստագէտը իր տարօրինակ, անգեղարուեստական, յաճախ հակագեղարուեստական արտայայտութիւններով առիթ է տուել խիստ դատավճիռների և ծաղրի, Ահարոնեան-քաղաքացին, Ահարոնեան-հասարակական-գործիչը արժանացել է ակնածութեան և յարգանքի, ի հարկէ, այն չափով, որ չափով որ նրա այդ գործունէութիւնը արտայայտվել է նրա գրուածքներում։

Այսպէս եմ հասկացել մեր հեղինակին, և բարեխիղճ քննադատութեան կոչ է ցոյց տալ իմ գնահատման թերութիւնները։

Բայց արի տես, որ իմ յօդուածը կարօտ է լրացուցիչ մեկնաբանութեան։ Մարդիկ ալճատող ակնոցներով են կարդում։ Եւ առաջինը՝ ինքը Ա. Ահարոնեանը։ Ցարդանքի զգացմունքից դրդված՝ «Գարունի» խմբագրութիւնը որոշել էր ժողովածուի մի հատմար ուղարկել Ահարոնեանին, որպէս ալամանախի նախկին աշխատակցի (միւս անուանի աշխատակիցներին էլ էր ուղարկված)։ Մի քանի շաբաթից յետոյ յետ ստացանք գիրքը։

Ժողովածուի եօթ յօդուածից երեքն էին կարդացված (միւսների թերթերն էլ չէին կտրված), իսկ իմ յօդուածի ճակատը զարդարված էր հեռեալ հայկական, չափազանց հայկական մակագրութեամբ.

«Այս «փորձը» փորձանք է իր հեղինակի համար։ «Գարունը» կարող էր աւելի լուրջ լինել։ ափսոս... գեղարուեստը ամենայարմար ապարէզն է «օսցիալ-դեմոկրատական» մարդանքների համար»։

Ուրեմն կուսակցական կրքի թելադրանք է իմ «փորձանք» յօդուածը, և այնքան վիրաւորական, որ Ահարոնեանը չէ վարանել կոպիտ կերպով վիրաւորելու մի խմբագրութիւն, որի հիւրընկալութիւնը նա ընդունել է մի անգամ։ Մենք կը տեսնենք, թէ արքան է հիմնաւորված Ա. Ահարոնեանի այդ անկօրեկտ վարմունքը։ Այժմ մի համեմատութիւն։ Իմ ընկեր Ալ. Մարտունին «Գարունի» նոյն գրքում խիստ քննադատութեան է ենթարկում Յովհ. Յովհաննիսեանին և չանում ապացուցել սրա քնարի տիրացուական-ըսկեցիոն բնաւորութիւնը։ Ինչպէս է վերաբերվում իր գրական գործունէութեան 30 տարին բոլորած բանաստեղծը։ Նա գրում է «Գարունի» աշխատակիցներից մէկին, որ նոյնիսկ Մարտունու յօդուածը կարդացել է բաւականութեամբ, թէև ամենևին համաձայն չէ իր քննադատին։

Ինչու։

Երևի այն պատճառով, որ Յովհ. Յովհաննիսեանը ընդունում է Ա. Ահարոնեանի կարծիքը, թէ «գեղարուեստական երկը ճարտարապետական մի շէնք է քաղաքի մեծ հրապարակի վրա, որի մասին իր կարծիքը կարող է յայտնել ամեն մի անցորդ» *)։

Շատ ափսոս, որ Ա. Ահարոնեանը այս աֆօրիզմը մտածելիս մոռացել է իր գեղարուեստական երկերը, և աւելի ափսոս, որ վերոյիշեալ մակագրութիւնը գրելիս չի մտաբերել իր աֆօրիզմը։ Յայտնի լինի Ա. Ահարոնեանին, որ «Գարունի» մէջ խիստ քննադատութեան ենթարկված հեղինակներից մէկն էլ բանաստեղծ Ա. Ծատուրեանն է, «Գարունի» խմբագիրներից մէկը։

Կարծեմ բաւական է այսքանը։ Ուրիշներին լենք։

Ուրախութեամբ եմ յիշատակում այստեղ Կ. Պոլսի «Ազատամարտ» թերթի ընդարձակ յօդուածը **), որի հեղինակ Ռ. Դարբինեանը հայերիս մէջ հազուագիւտ բարեխղճութեամբ քննութեան է առնում իմ բոլոր հայացքները՝ քաղաքական թէ էստէթիկական։

Դժբաղդաբար ես զրկված եմ յարգելի քննադատին պատասխանելու բաւականութիւնից, որովհետև ռուսահայ ընթերցողը իրանից անկախ պատճառներով համարեա չէ կարդում «Ազատամարտը», որպէսզի կարողանայ հետևել մեր վիճաբանութեան, մի պայման, որ անհետաքրքրական է դարձնում լրագրային բանակռիւը։

Ռուսահայ ժամանակում երկու յօդուած է լոյս տեսել իմ դէմ, երկուսն էլ «Հօրիզոնում»։

Այդ լրագրի № 113-ի առաջնորդողը խօսում է իմ և այն գրական կարծիքների մասին, որոնք արտայայտված են յօդուածիս առիթով մի քանի թերթերում։

Քննադատութիւն չէ այդ յօդուածը, որովհետև պատճառաբանելու թոյլ փորձ անգամ չը կայ։ Անօրինակ հայհոյանք է դա, մի կատաղի հովոց, որ մանր կրքերով յղփացած կուրծքը մեայն կարող էր ժայթքել։ Լսեցէք, թէ ինչ է գրված եղել «Հօրիզոնի» առաջնորդողում Ահարոնեանի քննադատների մասին։

«Շունը, ասում էր «Ֆաուստի» ստեղծագործողը, հաչում է ձիաւորի վրա, որովհետև նրան իրանից շատ բարձր է տեսնում»։

«Պարզ է ասված։»

Իսկապէս որ աւելի պարզ ասելն անհնարին է։ Փողոցում անգամ քիչ կը լսէք սրանից պարզ արտայայտութիւն։ Ընթերցողին վիրաւորած կը լինեմ, կարծում եմ, եթէ այս գոհարի որակման վրա կանգ առնեմ։ Փառք տանք աստուածներին, որ անձնիմ հեղինակը պահանջ է զգացել գոնէ «Հօրիզոնով» ծածկելու իր այլանդակ դէմքը։

Մի բան պարզ է։ առաջնորդողի հեղինակը, ինչպէս երևում է, մեծ ուշադրութեամբ է կարդացել Լէօի գրականութեան պատմութեան առաջաբանը, որովհետև արգու

մենտացիայի քառացի նմանութիւն է նը կատվում։ Պարզ է ասված։

Ցոլակ Խանզադեան

Մեծ-Ղարաքիլիսա

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Էկս սուլթան Աբդիւլ-Համիդին արդէն բերել են Կ. Պոլիս։ Երկիւղ կայ, որ նրան աղատելու են ալբանները։

✦ Ցարաբօլի մօտերը չերնոգօրցիները կորցրին 600 սպանված։

✦ Սկիւտարի մօտ չերնոգորցիները շրջապատված են երկու կողմից թիւրքաց զօրքերով։

✦ Թիւրքիան Ֆրանկֆուրտում պատուիրեց պատերազմական աւտոմոբիլներ ու աէրոպլաններ։

✦ Թիւրքական գերմանական բանկերում պահ տուած 10 միլիոն մարկը ստացաւ պատերազմի վրա ծախսելու համար,

✦ Ցոյն բանւորական միութիւնները կոչով խնդրում են Եւրոպայի և Ամերիկայի սոցիալիստներից՝ օգնել թիւրքերի դէմ սկսված կուռում։

✦ Բալկանեան պետութիւնների դաշնակցութիւնը որոշեց յաղթութեան դէպքում իրանց զօրքերը յետ չը քաշել թիւրքական նահանգներից մինչև Եւրոպական կոնֆերէնցիա գումարելը։

✦ Ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազոնովը մինիստրների խորհրդի նիստում զեկուցեց, որ Եւրոպական խաղաղութիւնը հաստատուն է, Աւստրիան էլ ագրեսիվ մտորումներ չունի։

✦ Լոնդոնում Բուքրիդը հանգանակութիւն է սկսել յոգուտ բալկանեան քրիստոնեաների։

✦ Չերնոգորցիների կուռող զօրաշարքերում գտնվում են շատ չերնոգորցի կանայք։

✦ Թիւրքաց կուռող զօրքերի հրամանատարների նպատակն է ներս քաշել դաշնակից պետութիւնների զօրքերին երկրի ներսը և յանկարծ շրջապատելով նրանց ջարդել բոլորին։

✦ Բիւրդական ցեղերը մեծաքանակ զօրախմբերով միանում են թիւրքաց զօրքերին։

✦ Սուլթանական իրադէով Կ. Պոլսում հաստատվեց զինուորական նահանգապետի պաշտօն։ Այդ պաշտօնում նշանակված է Մեհմդուհ փաշան։

✦ Հնդկաստանից տեղեկացնում են, որ աւղանական հոգևորականութեան ներկայացուցիչները շրջում են հնդկական նահանգները և վարդապետում են, որ աւղանական էմիրը հոգևոր գլուխ է ամբողջ աշխարհի մահմեդականների։

✦ Լուրերի համաձայն՝ այն զօրքերի թիւը, որ մտադրութիւն կայ ուղարկել Ասիպատական, լինելու է 3000։ Թէհրանում այն կարծիքն է տիրում, որ Ռուսաստանը, օգտվելով բալկանեան ճգնաժամից՝ վերջ է դնելու թիւրքաց արշաւանքին դէպի պարսկական երկիրը։

✦ Կ. Պոլսից շարունակ ստացվում են չափազանց յուզիչ տեղեկութիւններ քրիստոնեայ ազգաբնակութեան օրհասական կացութեան մասին։

✦ Մինչև այժմ դաշնակից պետութիւնների զօրքերը առանձին-առանձին մեծ ջարդ են տուել թիւրքերին, որոնք շարունակ յետ են նահանջում։

✦ Աւստրիան իմացրեց Թիւրքիային, որ եթէ ցանկանում է՝ որպէսզի Աւստրիան չը միջամտէ պատերազմին, այն դէպքում Ուսկիւբում գտնվելու է թիւրքական մեծ զօրաբանակ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)
8 հոկտեմբերի

ՄԱԴՐԻԴ։ Զորս անյայտ մարդ յարձակվեցին սպանական բանկի դրամատարի վրա, որ իջնում էր սանդուղքներով, ծածկեցին նրա դէմքը և յափշտակեցին 22,000 պեզէտ։

ՇՊԱՍԲԵՏ (Սակսոնիա)։ Դիրիժաբլի պայթումից սպանվեցին երկու հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեցին «Рѣчь»-ի 276-դ և «Ст. Отклики»-ի 7-դ համարները։

Եկաւ բալգարական դեսպան Բոբչէվը։

Գրաւվեցին «Вечъ. Вр.»-ի 270 և «День»-ի 7-դ համարները։

ԿԻԵՎ։ Բրոդսկիի Ալէքսանդրովեան և Կոբուկովի շաքարի գործարանների ընկերակցութիւնը վաճառվեց ռուս և Պարիզի բանկերի միութեանը 38 միլիոն բուբլով։

ԲԵՐԼԻՆ։ Ռուսաստանից բերվեց 1800 պուդ թարմ միս։

ԲՐԻՍԼԷԼ։ Բացվեց կանանց առևտրի դէմ մաքառող միջազգային կոնֆերէնցիան։

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ։ Զինուորական նահանգապետի դատարանում սկսվեց կուբանի շրջանում 1910 թ. գործող աւազակախմբի գործի քննութիւնը։ Մեղադրվում են 408, վկաներ են կանչված 274 հոգի։ Գործը կը տևէ 2 շաբաթից աւելի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻԾԴ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, որ արված են յայտնի բակտերիօլոգների կողմից մի ամբողջ շարք ողողումների վերաբերմամբ, ապացուցել են, անկասկած, որ էներգիական ներգործութիւն ունեցող միջոցները ատամների և լրձաթաղանթի համար վնասակար են, իսկ անվնասակար միջոցները՝ նոյնքան էլ անօգուտ։ Միակ բացառութիւն է կազմում ՕԴՕԼԸ, որը մեալով ինդիֆերենտ՝ ատամային նիւթերի և էմալի վերաբերմամբ, ծառայում է որպէս գործունեայ ախտահանիչ միջոց ամեն տեսակ ինֆէկցիաների, թթուղ և փտող պրոցէսների, ու թափանցելով լրձաթաղանթի ներսը՝ չէ վնասում նրան, այլ, ընդհակառակը, պահպանում, ամրացնում է նրան և մինչև անգամ թողնում բերանում դուրեկան և հովացնող համ։

Մէկ սրուակի գինը—85 կ., մեծ սրուակինը, որ բաւականանում է մի քանի ամիս—1 ր. 50 կ.։

(Ե.) (M. 378072/378082) 2—2

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ամբարձին երթևեկութիւն

ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ

Մեկնում են Բաթումից

I Պoսայիճ-մարդաւար օգնական։ Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »

II Մարդաւար օգնական։ Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »

III Մարդաւար-ապրանքի օգնական։ Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՊՕՍՏԱՑԻՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն գէպի Ալէքսանդրիայի բիօլՐեագայի, Մակրօնիայի, Սերբիայի, Անատոլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻՅԱԿԱՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Բրիգա, Լիբաւա և Ռէվել։

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Վելիամինովսկայա փողոց, № 18.

Հեռախօս № 11.

Ընդունվում են և ապահովացվում են ապրանքներ ծեռնտու պայմաններով։

Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց

(2.) 0—71

ՀԵԺԻՆ և արագ ազդող ազատական դեղ՝ ամենայն տեսակ ստամոքսի, աղիքների, լեղու և երիկամների հիվանդութիւնների համար։

ՍԱՌԱՍՊԱՅԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կոռկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐՄՈՒՏՔՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Դ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՇԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին հիւանդային։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՐԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Դ. Ց. ԳՈՒՐԳԻԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺՇԿԻ ԱՄԲՈՒՄՈՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ —12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺՇԿ Մ. Լ. ՌՆՆԻԳԵՐ-ԱՐԵԶԵԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Զ. Ա. ԹԱՌՈՒՄՈՎԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն։

Վճարը 50 կ.։ Զբաւոները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Ռ. Նաւասարդեան

1. 0—93

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժարան։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Սօլոլակ, Բէքուտովսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տելէֆոն № 1175.

(օ մ.) 377. 100—24

ՀԵԺԻՆ և ուսուցանելի ազդեցութիւն ունեցող դեղ՝ ամենայն տեսակ ստամոքսի, աղիքների, լեղու և երիկամների հիվանդութիւնների համար։

ՌՈՒՍԵՐԷՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐ, յարմարեցրած հայ ուսումնարանների կանանց և ծրագրին, Ա. տարի՝ գինը 25 կոպ., Բ. տարի՝ գինը 40 կոպ.։

ՌՈՒՍ-ՀԱՅ լիակատար բառարան, գինը 8 ռուբ., կազմած 9 ր.։

ՀԱՅ-ՌՈՒՍ լիակատար բառարան, գինը 6 ռուբ., կազմած 6 ր. 50 կ.։

Գումարով գնողներին զեղչ։

Բաժանորդագրութիւն Ռուս-Հայ առձեռն բառարանի 2 ր. 50 կ.։

Հանրագիտական բառարանի՝ 8 ր.։

Դիմել՝ Հ. Դաղբաշեանի. Въ Тифлисъ. Головинскій пр. 12.

(չ. ու. կ.) 717. 9—9

Լոյս տեսաւ

1. „Великіе праздники армянскаго народа", գինը 5 կոպ.։

2. „Армяно-Григоріанскій календарь на 1913 годъ", գինը 20 կ.։

Դիմել՝ Ставрополь губ. Свящ. С. Теръ-Ованнесьянцъ.

(օ.մ.) 751. 3—2

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԻՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Իսժեանի Ի. Ս. Պօնդոյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տելէֆոն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւն, կաթսայի, բիֆլէնոյ, տանիքի՝ սև և ցինկով պատած։ ԱՄՇԱՆ սրզրանեան։ ԳՈՒԴՐՕՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ։ Շինութեան և փուչ ԱՂԻՒՍ, ԿԴՄԻՆՏՐ մարսէյլեան տեսակի և այլ առարկ.։ Աղիւսի սեփական գործարան Թիֆլիսում։ Ամեն տեսակ շինարարական նիւթեղէն. համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ։
(չ.ու.կ) 617. 50—21

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրիտ և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՑՍ-ԿՈՒՐԱՆՏ ԳՆԵՐՈՎ։
ՏԷԼԷՖՕՆ № 67.

Բարեբաղդաբար, ես ամենևին չեմ մտածել նրանց գոյութեան մասին։ Գրել եմ միայն այն՝ ինչ որ մտածել եմ ու զգացել, արտայայտել եմ այնպէս՝ ինչպէս թելադրել են իմ խառնուածքն ու ոյժերը։ Եւ որովհետև մարդկային զնահատութիւնը միայն որոշ տեսակէտից է հնարաւոր, ես, բնականօրէն, մօտեցել եմ հեղինակին իմ գեղարուեստական և քաղաքական տեսակէտներից, որոնք, ի հարկէ, հանրապարտաւորական չեն։

Անկիրք պայքարը արամաբանական աբսուրդ է, և ես ջղային շարժումով եմ ձեռնոց նետել յանուն իմ գաղափարների։

Կարելի է միանգամայն չը համաձայնել ինձ—դա ճաշակի և հասկացողութիւնների խնդիր է—բայց կասկածել իմ վերաբերմունքի լաւորակութեան մասին դէպի Ահարոնեանը՝ կարող են միմիայն հայկական նախապաշարված ուղեղները, կամ, աւելի ճիշդ, անբարեխիղճները, որովհետև արևի լոյսից պարզ են արտայայտված իմ մտքերն այս խնդրի նկատմամբ։

Հակառակի պատճառով գերազանցօրէն զբաղվելով հեղինակի ստեղծագործութեան գեղարուեստական կողմով, ես մի քանի անգամ շեշտել եմ նրա քնարի հասարակական նշանակութիւնը, նրա կատարած դերը մեր պատմութեան դժոխային ժամանակաշրջաններից մէկում։ Եւ այնտեղ, ուր Ա. Ահարոնեան-գեղարուեստագէտը իր տարօրինակ, անգեղարուեստական, յաճախ հակագեղարուեստական արտայայտութիւններով առիթ է տուել խիստ դատավճիռների և ծաղրի, Ահարոնեան-քաղաքացին, Ա. Ահարոնեան-հասարակական-գործիչը արժանացել է ակնածութեան և յարգանքի, ի հարկէ, այն չափով, որ չափով որ նրա այդ գործունէութիւնը արտայայտվել է նրա գրուածքներում։

Այսպէս եմ հասկացել մեր հեղինակին, և բարեխիղճ քննադատութեան կոչ է ցոյց տալ իմ գնահատման թերութիւնները։

Բայց արի տես, որ իմ յօդուածը կարօտ է լրացուցիչ մեկնաբանութեան։ Մարդիկ ալճատող ակնոցներով են կարդում։ Եւ առաջինը՝ ինքը Ա. Ահարոնեանը։ Ցարդանքի զգացմունքից դրդված՝ «Գարունի» խմբագրութիւնը որոշել էր ժողովածուի մի հատմար ուղարկել Ահարոնեանին, որպէս ալամանախի նախկին աշխատակցի (միւս անուանի աշխատակիցներին էլ էր ուղարկված)։ Մի քանի շաբաթից յետոյ յետ ստացանք գիրքը։

Ժողովածուի եօթ յօդուածից երեքն էին կարդացված (միւսների թերթերն էլ չէին կտրված), իսկ իմ յօդուածի ճակատը զարդարված էր հեռեալ հայկական, չափազանց հայկական մակագրութեամբ.

«Այս «փորձը» փորձանք է իր հեղինակի համար։ «Գարունը» կարող էր աւելի լուրջ լինել։ ափսոս... գեղարուեստը ամենայարմար ապարէզն է «օսցիալ-դեմոկրատական» մարդանքների համար»։

Ուրեմն կուսակցական կրքի թելադրանք է իմ «փորձանք» յօդուածը, և այնքան վիրաւորական, որ Ահարոնեանը չէ վարանել կոպիտ կերպով վիրաւորելու մի խմբագրութիւն, որի հիւրընկալութիւնը նա ընդունել է մի անգամ։ Մենք կը տեսնենք, թէ արքան է հիմնաւորված Ա. Ահարոնեանի այդ անկօրեկտ վարմունքը։ Այժմ մի համեմատութիւն։ Իմ ընկեր Ալ. Մարտունին «Գարունի» նոյն գրքում խիստ քննադատութեան է ենթարկում Յովհ. Յովհաննիսեանին և չանում ապացուցել սրա քնարի տիրացուական-ըսկեցիոն բնաւորութիւնը։ Ինչպէս է վերաբերվում իր գրական գործունէութեան 30 տարին բոլորած բանաստեղծը։ Նա գրում է «Գարունի» աշխատակիցներից մէկին, որ նոյնիսկ Մարտունու յօդուածը կարդացել է բաւականութեամբ, թէև ամենևին համաձայն չէ իր քննադատին։

Ինչու։

Երևի այն պատճառով, որ Յովհ. Յովհաննիսեանը ընդունում է Ա. Ահարոնեանի կարծիքը, թէ «գեղարուեստական երկը ճարտարապետական մի շէնք է քաղաքի մեծ հրապարակի վրա, որի մասին իր կարծիքը կարող է յայտնել ամեն մի անցորդ» *)։

Շատ ափսոս, որ Ա. Ահարոնեանը այս աֆօրիզմը մտածելիս մոռացել է իր գեղարուեստական երկերը, և աւելի ափսոս, որ վերոյիշեալ մակագրութիւնը գրելիս չի մտաբերել իր աֆօրիզմը։ Յայտնի լինի Ա. Ահարոնեանին, որ «Գարունի» մէջ խիստ քննադատութեան ենթարկված հեղինակներից մէկն էլ բանաստեղծ Ա. Ծատուրեանն է, «Գարունի» խմբագիրներից մէկը։

Կարծեմ բաւական է այսքանը։ Ուրիշներին լենք։

Ուրախութեամբ եմ յիշատակում այստեղ Կ. Պոլսի «Ազատամարտ» թերթի ընդարձակ յօդուածը **), որի հեղինակ Ռ. Դարբինեանը հայերիս մէջ հազուագիւտ բարեխղճութեամբ քննութեան է առնում իմ բոլոր հայացքները՝ քաղաքական թէ էստէթիկական։

Դժբաղդաբար ես զրկված եմ յարգելի քննադատին պատասխանելու բաւականութիւնից, որովհետև ռուսահայ ընթերցողը իրանից անկախ պատճառներով համարեա չէ կարդում «Ազատամարտը», որպէսզի կարողանայ հետևել մեր վիճաբանութեան, մի պայման, որ անհետաքրքրական է դարձնում լրագրային բանակռիւը։

Ռուսահայ ժամանակում երկու յօդուած է լոյս տեսել իմ դէմ, երկուսն էլ «Հօրիզոնում»։

Այդ լրագրի № 113-ի առաջնորդողը խօսում է իմ և այն գրական կարծիքների մասին, որոնք արտայայտված են յօդուածիս առիթով մի քանի թերթերում։

Քննադատութիւն չէ այդ յօդուածը, որովհետև պատճառաբանելու թոյլ փորձ անգամ չը կայ։ Անօրինակ հայհոյանք է դա, մի կատաղի հովոց, որ մանր կրքերով յղփացած կուրծքը մեայն կարող էր ժայթքել։ Լսեցէք, թէ ինչ է գրված եղել «Հօրիզոնի» առաջնորդողում Ահարոնեանի քննադատների մասին։

«Շունը, ասում էր «Ֆաուստի» ստեղծագործողը, հաչում է ձիաւորի վրա, որովհետև նրան իրանից շատ բարձր է տեսնում»։

«Պարզ է ասված։»

Իսկապէս որ աւելի պարզ ասելն անհնարին է։ Փողոցում անգամ քիչ կը լսէք սրանից պարզ արտայայտութիւն։ Ընթերցողին վիրաւորած կը լինեմ, կարծում եմ, եթէ այս գոհարի որակման վրա կանգ առնեմ։ Փառք տանք աստուածներին, որ անձնիմ հեղինակը պահանջ է զգացել գոնէ «Հօրիզոնով» ծածկելու իր այլանդակ դէմքը։

Մի բան պարզ է։ առաջնորդողի հեղինակը, ինչպէս երևում է, մեծ ուշադրութեամբ է կարդացել Լէօի գրականութեան պատմութեան առաջաբանը, որովհետև արգուենտացիայի քառացի նմանութիւն է նը կատվում։ Պարզ է ասված։

Ցոլակ Խանզադեան

Մեծ-Ղարաքիլիսա

*) «Հօրիզոն», № 88, Կ. Մենակի «երկու խօսքը» պ. Echo-ին։

**) «Ազատամարտ» № № 918, 919, 920, 921, 922 և 923.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Էկս սուլթան Աբդիւլ-Համիդին արդէն բերել են Կ. Պոլիս։ Երկիւղ կայ, որ նրան աղատելու են ալբանները։

✦ Ցարաբօլի մօտերը չերնոգորցիները կորցրին 600 սպանված։

✦ Սկիւտարի մօտ չերնոգորցիները շրջապատված են երկու կողմից թիւրքաց զօրքերով։

✦ Թիւրքիան Ֆրանկֆուրտում պատուիրեց պատերազմական աւտոմոբիլներ ու աէրոպլաններ։

✦ Թիւրքական գերմանական բանկերում պահ տուած 10 միլիոն մարկը ստացաւ պատերազմի վրա ծախսելու համար,

✦ Ցոյն բանւորական միութիւնները կոչով խնդրում են Եւրոպայի և Ամերիկայի սոցիալիստներից՝ օգնել թիւրքերի դէմ սկսված կուռում։

✦ Բալկանեան պետութիւնների դաշնակցութիւնը որոշեց յաղթութեան դէպքում իրանց զօրքերը յետ չը քաշել թիւրքական նահանգներից մինչև Եւրոպական կոնֆերէնցիա գումարելը։

✦ Ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազոնովը մինիստրների խորհրդի նիստում զեկուցեց, որ Եւրոպական խաղաղութիւնը հաստատուն է, Աւստրիան էլ ագրեսիվ մտորումներ չունի։

✦ Լոնդոնում Բուքրիդը հանգանակութիւն է սկսել յոգուտ բալկանեան քրիստոնեաների։

✦ Չերնոգորցիների կուռող զօրաշարքերում գտնվում են շատ չերնոգորցի կանայք։

✦ Թիւրքաց կուռող զօրքերի հրամանատարների նպատակն է ներս քաշել դաշնակից պետութիւնների զօրքերին երկրի ներսը և յանկարծ շրջապատելով նրանց ջարդել բոլորին։

✦ Բիւրդական ցեղերը մեծաքանակ զօրախմբերով միանում են թիւրքաց զօրքերին։

✦ Սուլթանական իրադէով Կ. Պոլսում հաստատվեց զինուորական նահանգապետի պաշտօն։ Այդ պաշտօնում նշանակված է Մեհմդուհ փաշան։

✦ Հնդկաստանից տեղեկացնում են, որ աւղանական հոգևորականութեան ներկայացուցիչները շրջում են հնդկական նահանգները և վարդապետում են, որ աւղանական էմիրը հոգևոր գլուխ է ամբողջ աշխարհի մահմեդականների։

✦